



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ [board@ysu.am](mailto:board@ysu.am), [www.ysu.am](http://www.ysu.am)

### Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երևանի պետական համալսարան»

հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝

2022 թ. մարտի 21-ին տեղի ունեցած թիվ 5 առցանց նիստի

ՀՀ, ք. Երևան

21.03.2022 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2022 թվականի մարտի 21-ին տեղի ունեցավ Հոգաբարձուների խորհրդի հարցման կարգով նիստը: Նիստին մասնակցեցին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 19-ը (կից ներկայացվում են Խորհրդի 19 անդամների համաձայնությունները):

Նիստը նախագահում էր ՀԽ նախագահ Սուրեն Պապիկյանը, քարտուղարում՝ ՀԽ քարտուղար Եղիշե Կիրակոսյանը:

### Ներկայացված օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման՝ 50 միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրի հաստատում:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Քաղաքական ինստիտուտների և գործընթացների» և «Քաղաքական գիտության պատմության և տեսության» ամբիոնների միաձուլման տեսքով վերակազմակերպման հաստատում:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում լրացումների ու փոփոխությունների հաստատում:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի ընտրություն:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման հայտերի հիման վրա ընտրված մասնակիցների մասին տվյալները և հայտը ՀՀ ՏԿԵ պետական գույքի կառավարման կոմիտե ուղարկելու առաջարկություն:

**1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման՝ 50 միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրի հաստատում:**

Առցանց եղանակով 1-ին հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

**Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 17)-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 17-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կնքված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված թիվ «ԵՊՀ-ԲՄՇՁԲ-21/161» ծածկագրով 161 280 000 ՀՀ դրամի պայմանագիրը՝ համաձայն հավելվածի:

**2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Քաղաքական ինստիտուտների և գործընթացների» և «Քաղաքական գիտության պատմության և տեսության» ամբիոնների միաձուլման տեսքով վերակազմակերպման հաստատում:**

Առցանց եղանակով 2-րդ հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

**Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Քաղաքական ինստիտուտների և գործընթացների» և «Քաղաքական գիտության պատմության և

տեսության» ամբիոնների միաձուլման տեսքով վերակազմակերպումը «Քաղաքագիտության» ամբիոնի:

**3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում լրացումների ու փոփոխությունների հաստատում :**

Առցանց եղանակով 3-րդ հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5)-րդ և 6)-րդ ենթակետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի փետրվարի 18-ի 18-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում լրացումներն ու փոփոխությունները:

**4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի ընտրություն:**

Հոգաբարձուների խորհուրդը ծանոթացավ Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան կազմակերպված և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձին վերաբերող փաստաթղթերի փաթեթին:

**5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման հայտը ՀՀ ՏԿԵ պետական գույքի կառավարման կոմիտե ուղարկելու առաջարկություն:**

Հոգաբարձուների խորհուրդը ծանոթացավ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ անձանց տվյալներին և որոշեց հայտ ուղարկել ՀՀ ՏԿԵ պետական գույքի կառավարման կոմիտե ուղղակի ձևով մրցույթով կամ աճուրդով տարածքների վարձակալության համար:

Խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

Խորհրդի քարտուղար՝

Ե. Կիրակոսյան